

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ռոման ՀԱԿՈՐԶԱՆՅԱՆ

ՀԱԱՀ Հաշվ. հաշվառ. և աուդիտ ամբիոնի դասախոս, տ.գ.թ.

Բանալի բառեր. ենթակառուցվածք, բնակավայր, ճանապարհաշինություն,
գազամատակարարում, ջրամատակարարում

Ենթակառուցվածքները (լատ. Infra-ներքև, տակ և structura-կառուցվածք, տեղաբաշխում) տնտեսության ճյուղերի համալիր է, որը սպասարկում է արտադրությանը: Ընդգրկում է ճանապարհները, ջրանցքները, ջրամբարները, կամուրջները, օդանավակայանները, էներգետիկ տնտեսությունը, շինարարությունը, տրանսպորտը, կապը, ջրամատակարարումն ու կոյուղին, կրթությունը, գիտությունը, առողջապահությունը և այլն¹:

Յուրաքանչյուր համակարգ ունի իր ենթակառուցվածքները՝ սկսած համապետական ենթակառուցվածքներից մինչև առանձին տարածաշրջանների, համայնքների, ճյուղերի, ոլորտների, կազմակերպությունների ենթակառուցվածքները, «որն ապահովում է տնտեսական հարաբերությունների արդյունավետ գործունեությունը»²:

Բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում ենթակառուցվածքների զարգացման ու պահպանման հոգսերը հիմնականում իր վրա է վերցնում պետությունը, որովհետև դրանք միշտ էլ մեծ չափերի ծախսեր են պահանջում, համարյա շահույթ չեն ապահովում, ինչի պատճառով մասնավոր ձեռներեցությունը խույս է տալիս այդ բնագավառից: Ենթակառուցվածքների հիմնախնդիրն առավել կարևոր նշանակություն է ստանում գյուղական բնակավայրերի համար՝ կապված նրանց ցրվածության, տեղաբաշխման հեռավորությունների, բնակեցման ցածր աստիճանի հետ:

Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գերակա խնդիրներից է մարզային ու համայնքային ենթակառուցվածքների վերականգնումը, արդիականացումը և հետագա կատարելագործումը: Մարզում ենթակառուցվածքների զարգացման հիմնախնդիրները հիմնականում առնչվում են ճանապարհաշինության, գազամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման խնդիրների հետ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության համար տրանսպորտային հանգույցի կարևոր մաս է կազմում ավտոմոբիլային ճանապահացանցը, որն

¹ Советский энциклопедический словарь, Советская Энциклопедия, М. 1985, с. 499.

² Տնտեսագիտության տեսություն (Գ. Կիրակոսյանի և Ի. Խլղաթյանի խմբագրությամբ): Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տնտեսագետ» 2009, էջ 159:

առաջնային նշանակություն ունի ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ յուրաքանչյուր մարզի, համայնքի ու բնակավայրի համար:

Սյունիքի մարզն ընգրկում է 359.6 կմ միջպետական նշանակության, 166.25 կմ հանրապետական նշանակության և 515.2 կմ մարզային (տեղական) նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ³: Մարզն ամբողջապես կախված է ճանապարհային փոխադրումներից, չկան երկաթուղիներ և գործող օդանավակայաններ:

Սյունիքի մարզով է անցնում Մ-2 Երևան - Մեղրի - Իրանի Իսլամական Հանրապետություն միջպետական ճանապարհը, որին Գորիս քաղաքի մոտ միանում է ՀՀ-ն Արցախին կապող հիմնական ճանապարհը: Մ-2 ավտոճանապարհով են իրականացվում Իրանի Իսլամական Հանրապետությունից ներմուծվող և արտահանվող բեռնափոխադրումները:

Մարզում ուղևորա և բեռնափոխադրումները կազմակերպվում են մասնավոր ընկերությունների կողմից: Մարզում թվով 33 երթուղիներից ներկայումս սպասարկում իրականացվում է 11 երթուղիներում, իսկ մնացած 22-ում սպասարկում չի իրականացվում՝ մրցույթներին հայտատուների բացակայության պատճառով:

Մեր հանրապետությունում աղքատության մակարդակն ուղղակիորեն կապված է մարզերը Երևանից, համայնքները մարզկենտրոններից հեռավորության հետ և հատկապես՝ այդ հեռավորությունները կապող ճանապարհների անմխիթար վիճակի հետ:

Սյունիքի մարզը հանրապետության մյուս մարզերից ամենահեռուն է մայրաքաղաքից. Սիսիանի տարածաշրջանի բնակավայրերը գտնվում են մայրաքաղաքից 210-240 կմ, Գորիսի տարածաշրջանի բնակավայրերը՝ 220-280 կմ, Կապանի տարածաշրջանի բնակավայրերը՝ 300-350 կմ, իսկ Մեղրու տարածաշրջանի բնակավայրերը՝ 374-422 կմ հեռավորության վրա: Մարզի գյուղական համայնքների ու բնակավայրերի հեռավորությունը քաղաքային համայնքներից և մարզկենտրոնից տատանվում է 3-ից մինչև 139 կմ:

Փոխադրամիջոցների հասանելիության մակարդակի տարբերություններն ըստ տարածքների առաջանում են մարզային կենտրոններից և մայրաքաղաքից տվյալ հեռավորության պատճառով: Սակայն, տրանսպորտի տեսանկյունից տարածքների միջև տարբերությունները գնահատելու համար ավելի պատշաճ տեղեկատվություն կարելի է ստանալ վարչատարածքային բնակչության թվին ու բաշխվածությանը համեմատ ճանապարհների հասա-

³ ՀՀ Սյունիքի մարզի 2017-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարություն: <http://www.mtad.am/files/docs/1580.pdf>

նելիության գնահատման միջոցով: Մարզից մարզ կամ մարզի ներսում ճանապարհային երթևեկության տևողությունը բնակչության թվին հարաբերելիս՝ ստացվում է համայնքային ճանապարհների մատչելիության տեսանկյունից ամենացածր մակարդակը Սյունիքի մարզում է, որտեղ ճանապարհների մատչելիության բարելավումը ՀՀ մարզերի շարքում ամենաանհրաժեշտները է (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիությունն՝ ըստ մարզերի և բնակչության թվի, 2015թ.⁴

ՀՀ մարզերը	Ներհամայնքային հասանելիություն, րոպե	Միջհամայնքային և ներհամայնքային հասանելիություն, րոպե	Անհավասարությունը միջ և ներհամայնքային հասանելիության միջև, %	Միջհամայնքային հասանելիության բարելավման ընդհանուր կարիքը, դաս
Արագածոտն	22	30	136	10
Արարատ	20	35	175	9
Արմավիր	31	62	200	7
Գեղարքունիք	31	74	239	6
Լոռի	16	92	575	4
Կոտայք	26	46	177	8
Շիրակ	6	88	1467	1
Սյունիք	41	249	607	3
Տավուշ	33	101	306	5
Վայոց Ձոր	16	110	688	2

Մարզի միջպետական և մասամբ հանրապետական նշանակության ճանապարհները գտնվում են համեմատաբար բարվոք վիճակում, սակայն մարզային ու համայնքային նշանակության ճանապարհների վիճակն անմխիթար է: Ընդհանուր առմամբ Սյունիքի մարզում ճանապարհաշինության ոլորտում ձևավորվել են որոշակի խնդիրներ, որոնք պայմանավորվում են հետևյալ առանձնահատկություններով ու բնորոշ գծերով.

- մարզային ենթակայության ճանապարհների զգալի մասը անցնում է խստաշունչ և երկարաձիգ ձմեռային կլիմայական պայմաններ ունեցող լեռնային գոտիներով,

- մթնոլորտային տեղումների բացասական ազդեցությունների հետևանքով, մարզային ենթակայության ճանապարհների զգալի մասը քանդվել ու դարձել են տրանսպորտային միջոցների երթևեկության համար դժվարանցանելի, իսկ որոշ հատվածներում՝ նույնիսկ անանցանելի:

⁴ ՀՀ 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարություն: https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf

Ենթակառուցվածքներն ունեն մեկ բնորոշ հատկանիշ. եթե նրանց վրա չի կատարվում ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքներ, ապա դրանց վերականգնման համար որոշ ժամանակ հետո կպահանջվի մի քանի անգամ ավելի ծախսեր: Դա առաջին հերթին վերաբերվում է ավտոճանապարհներին, որոնց ֆիզիկական մաշվածությունն ավելի արագ է կատարվում: Սյունիքի մարզի ավտոճանապարհները չբարելավելու դեպքում, վիճակն առավել անմխիթար կդառնա:

Ըստ Սյունիքի մարզպետարանի տվյալների 2016թ. ընթացքում մարզի ճանապարհաշինարարական և այլ կազմակերպությունների կողմից իրականացվել է ավելի քան 2.2 մլրդ. դրամի աշխատանքներ: Նշված աշխատանքների կատարման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 1.44 մլրդ. դրամ իսկ մնացած 0.76 մլրդ. դրամը տրամադրել է Համաշխարհային բանկը:

Նկատի ունենալով մարզի ճանապարհաշինական ենթակառուցվածքների ոլորտում առկա խնդիրները ֆինանսական միջոցների առկայության պարագայում այդ միջոցներն առաջին հերթին անհրաժեշտ է ուղղել համայնքային նշանակության ճանապարհների շինարարությանը՝ հաշվի առնելով աղքատության վրա վերջիններիս ավելի մեծ ազդեցության աստիճանը: Որպես ճանապարհաշինական ենթակառուցվածքների բարելավում անհրաժեշտ է նշել նաև Հյուսիս - Հարավ ճանապարհի կառուցման գործընթացը, որն էական ազդեցություն կունենա բեռնա և ուղևորափոխադրումների ժամանակի կրճատման, հետևաբար՝ ինքնարժեքի նվազեցման վրա:

Արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների մեջ կարևոր նշանակություն ունի գազամատակարարումը, որը հանդիսանում է բնակչության բարեկեցության և արտադրության արդյունավետության բարձրացման հիմնական գործոններից մեկը:

Գազաֆիկացումը Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր նախապայմաններից է: Այստեղ երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգոռեսուրսների բացակայությունը ընդգծում են համայնքներին բնական գազի մատակարարման հրատապությունը:

Մարզի ողջ տարածքով է անցնում Իրան - Հայաստան գազատարը, սակայն եթե հանրապետությունում գազամատակարարումը ավարտվել է համայնքների 90%-ում, ապա Սյունիքում այն կազմում է 35%: Քաղաքային բնակավայրերից բնական գազով գազաֆիկացված չեն Սեղրի, Ագարակ և Դաստակերտ քաղաքները: 2016թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի գազաֆիկացված բազմաբնակարանային շենքերի բնակարանների և բնակելի տների տեսակար կշիռը քաղաքային բնակավայրերում կազմել է 73.5% իսկ գյուղական բնակավայրերում՝ 33.5%: Համեմատության համար նշենք, որ նույն թվակա-

նի դրությամբ հանրապետությունում այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 88.3% և 57.3%⁵:

Մարզում գազաֆիկացման աշխատանքները հիմնականում իրականացվում են «Գազպրոմ - Արմենիա» ՓԲԸ-ի և համայնքների համաֆինանսավորմամբ, որոնք սակայն բավարար չեն ապահովելու գազամատակարարումը՝ նույնիսկ հիմնական գազատարին մոտ համայնքներում, քանի որ փոքրաթիվ սպառողների պայմաններում տվյալ գործունեությունը չի կարող շահավետ լինել՝ հակասելով շուկայական տնտեսավարման սկզբունքներին:

ՀՀ Սյունիքի մարզի բնակավայրերի 2014-2016թթ. գազաֆիկացման հիմնական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. ՀՀ Սյունիքի մարզի գազաֆիկացման հիմնական ցուցանիշները 2014-2016թթ. տարեվերջին⁶

Ցուցանիշներ	2014թ.			2015թ.			2016թ.		
	ընդամենը	այդ թվում՝ քաղաքներում	գյուղերում	ընդամենը	այդ թվում՝ քաղաքներում	գյուղերում	ընդամենը	այդ թվում՝ քաղաքներում	գյուղերում
Գազի փողոցային ցանցի միագիծ երկարությունը, կմ	500.47	266.11	234.36	511.64	275.14	241.50	519.27	277.29	241.98
Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը, միավոր	24435	19725	4730	24766	19960	4806	25005	20154	4851
Սպառողներին տրված գազը տարվա ընթացքում, մլն. մ ³ այդ թվում՝ բնակչ.	48287	40725	7562	48362	39538	8824	48998	40204	8794
Բնակչությանը տրված բնական գազի ծավալը մեկ բնակչի հաշվով մ ³	101.1	123.9	54.2	104.8	128.0	57.0	113.0	139.3	58.5

Աղյուսակի 2-ի տվյալներից պարզ է դառնում, որ 2014-2016թթ. մարզում գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը ավելացել է 570 միավորով՝ որից քաղաքային բնակավայրերում՝ 429 միավորով: Նշված ժամանակահատվածում սպառողներին տրված գազի ծավալները աճել են 711 մլն. մ³-ով՝ կազմելով 48998 մլն. մ³:

Բնակչության կողմից գազի սպառման ծավալները նույնպես ավելացել են. 2016թ. մեկ բնակչի հաշվով տրված բնական գազի ծավալը կազմել է 113

⁵ Հիմք են ընդունվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները:
⁶ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015, 2016, 2017 թվականների հունվար-մարտին: Տեղեկատվական ամսական զեկույցներ, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015, էջ 254-258, Երևան, 2016, էջ 290-294, Երևան, 2017, էջ 293-297:

մ³, ընդ որում քաղաքային բնակավայրերում մեկ բնակչի հաշվով շուրջ 2.4 անգամ ավելի շատ գազ է սպառվել քան գյուղական բնակավայրերում: Այս հանգամանքը առաջին հերթին պայմանավորված է գյուղական բնակավայրերում բնակչության ցածր վճարունակության և այլընտրանքային էներգառեսուրսների առկայության հետ: Գազամատակարարման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունը պետք է ուղղվի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը: Ներկայումս աշխատանքներ են կատարվում մարզի բազմաբնակարան շենքերում լոկալ ջեռուցման համակարգերի տեղադրման ուղղությամբ: Բայց քանի որ գազը ապրանք է և դրա գինն ունի աճման միտում, ապա այդ գործոնը բերում է գազաֆիկացման հանդեպ պահանջարկի նվազմանը: Մարդկային կենսագործունեության ապահովման կարևոր պայմաններից է նաև բնակչությանը խմելու ջրի մատակարարումը, որը լինելով բնության բարիք՝ անհավասարաչափ է տեղաբաշխված երկրագնդի, մեր հանրապետության և առանձին տարածաշրջաններում:

Սյունիքի մարզում ջրամատակարարումը իրականացվում է «Հայջր-մուղկոյուղի» ՓԲԸ-ի և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Խմելու ջուրն ունի ռազմավարական ռեսուրսի նշանակություն, որը բավարար չափով չի մատակարարվում մի շարք գյուղական համայնքներում, չնայած որ գոյություն ունեն ջրի զգալի պաշարներ: Մարզի հատկապես գյուղական բնակավայրերի ջրամատակարարման ու ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն, գտնվում են խիստ մաշված և անբարվոք վիճակում, որը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը որակյալ ջրամատակարարման գործում. հիմնականում չունեն սանիտարական գոտիներ և ջուրը չի վարակազերծվում: Այսպիսով, Սյունիքի մարզում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի խնդիրները կապված են տեխնիկա-տնտեսական դժվարալուծելի հարցերի հետ, մասնավորապես.

- ջրամատակարարման համակարգերի հնամաշության, քայքայվածության, պահպանման և վերականգնման համար միջոցների բացակայության, որը բերում է ջրի մեծ կորուստների (2017թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի կենտրոնացված ջրամատակարարման համակարգի մաշվածությունը կազմել է 42.3%, ինչի պատճառով ջրի կորուստները կազմել են 55.3%⁷),
- ջրօգտագործման դիմաց գանձումների ցածր մակարդակի,
- համայնքների ղեկավարների կողմից նվազ ուշադրության,

⁷ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-մարտին: Տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2017, էջ 287, 289:

- ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերի անբավարար վիճակի կամ է լիակատար բացակայության (2017թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի կոյուղու համակարգի մաշվածության աստիճանը կազմել է 36.8%⁸):

Ջրամատակարարման ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ ջուր մատակարարելու խնդրին, որն ուղղակիորեն կնպաստի մարզի բնակչության աղքատության կրճատմանը: Դրա համար անհրաժեշտ է իրականացնել զգալի ներդրումներ ջրամատակարարման առկա համակարգերի պահպանման և վերականգնման, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման և ջրամատակարարման համակարգերի արդիականացման ոլորտներում: Սակագնային քաղաքականություն մշակելիս անհրաժեշտ է խուսափել սակագների և սպառողական վարձավճարների կտրուկ բարձրացման միջոցով իրականացվող ծախսածածկումից: Մատակարար-սպառող փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով էականորեն կարևոր է ճիշտ գնահատել փոքր համայնքների շահերը, դրանցում ներդրումների նպատակահարմարությունը: Այս ոլորտում կապիտալ ծախսերը պետք է կատարվեն պետական ներդրումային ծրագրերի միջոցով: Ջրամատակարարման կազմակերպությունների կառավարման բարելավումը զգալիորեն կարող է նպաստել մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, քանի որ դրանք աշխատում են ինքնաֆինանսավորման սկզբունքով: Դրա համար անհրաժեշտ է առաջին հերթին նվազեցնել ջրի կորստի աստիճանը և բարձրացնել վճարների հավաքագրման մակարդակը:

Այսպիսով, վերլուծելով Սյունիքի մարզի ենթակառուցվածքների զարգացման վիճակը, կարելի է նշել, որ մարզում ենթակառուցվածքների զարգացման հիմնական խնդիրները կապված են ֆինանսական միջոցների անբավարարության հետ, որի պատճառով ենթակառուցվածքների վերականգնումն ու պահպանումը լայնածավալ չեն եղել, իսկ կատարված ներդրումների ազդեցությունը բավարար չի եղել ծառայությունների կենսունակություն ապահովելու համար: Հետևաբար, նախատեսվող միջոցառումները պետք է մանրակրկիտ ուսումնասիրել՝ առավելագույնի հասցնելու իրականացվող միջոցառումների ազդեցությունը և մատուցվող ծառայությունների որակը:

⁸ Նույն տեղում, էջ 290:

Ռոման ՅԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ՀՀ Սյունիքի մարզի ենթակառուցվածքների վիճակը և զարգացման հիմնախնդիրները

Բանալի բառեր. ենթակառուցվածք, բնակավայր, ճանապարհաշինություն, գազամատակարարում, ջրամատակարարում

Սույն հոդվածը նվիրված է ՀՀ Սյունիքի մարզի արտադրական ենթակառուցվածքների վիճակի և դրա զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրմանը: Մարզային ու համայնքային ենթակառուցվածքների զարգացումը հանդիսանում է Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայություններից մեկը: Մարզում ենթակառուցվածքների զարգացման հիմնախնդիրները հիմնականում առնչվում են ճանապարհաշինության, գազամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման խնդիրների հետ: Ենթակառուցվածքների հիմնախնդիրն առավել կարևոր նշանակություն է ստանում գյուղական բնակավայրերի համար՝ կապված նրանց ցրվածության, տեղաբաշխման հեռավորությունների և բնակեցման ցածր աստիճանի հետ:

Roman HAKOBIANYAN

Condition and Development Issues of RA Syunik Province Infrastructure

Key words: infrastructure, settlement, road construction, gas-supply, water-supply

This article dwells upon the study of the condition and development issues of the production infrastructure of RA Syunik Province. The development of provincial and community infrastructure is one of the social-economic development priorities of Syunik Province. The infrastructure development issues in the province are mainly related to the problems of road construction, gas supply, water supply and water disposal. The infrastructure issue is of particular importance for the rural settlements due to their dispersion, distribution distance and low level of population.

Роман АКОБДЖАНИЯН

Состояние и вопросы развития инфраструктуры Сюникской области РА

Ключевые слова: инфраструктура, поселение, дорожное строительство, газоснабжение, водоснабжение

Данная статья посвящена изучению состояния и вопросов развития производственной инфраструктуры Сюникской области РА. Развитие областной и общинной инфраструктуры является одним из приоритетов социально-экономического развития Сюникской области. Вопросы развития инфраструктуры в области главным образом связаны с проблемами дорожного строительства, газоснабжения, водоснабжения и водоотведения. Вопрос инфраструктуры приобретает особую важность для сельских поселений в связи с их разбросанностью, расстоянием распределения и низким уровнем населенности.